ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

0051 Երևան, Կոմիտաս 54բ, Հեռ. ՝010 594 192
Էլ. հասցե՝ pdpa@justice.am

Վարչական վարույթ. գործ N-035/07/23

ՈՐՈՇՈՒՄ

անձնական տվյալների մշակման՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխանության վերաբերյալ

17.08.2023թ. *ք. Երևան*

Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ նաեւ՝ Գործակալություն) պետի պարտականությունները կատարող Ջուլիետա Մաթևոսյանս, ուսումնասիրելով N-037/07/23 վարչական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

1. **Գործի նախապատմությունը.**

1.1. Գործակալությունը 2021 թվականի հունիսի 21-ին N/24.1/17495-2021 գրությամբ Երեւանի քաղաքապետարանին հայտնել էր Երեւանի քաղաքապետարանի կողմից ձեռք բերված նոր, փոքր դասի երթուղային ավտոբուսներում տեսահսկման իրականացման (տեսահսկման միջոցով անձնական տվյալների (կենսաչափական) մշակման) վերաբերյալ ծանուցում ներկայացնելու անհրաժեշտության մասին:

1.2. Ի պատասխան՝ Երեւանի քաղաքապետարանը 2021 թվականի հունիսի 28-ի թիվ 14/77036 գրությամբ ներկայացրել էր համապատասխան ծանուցումը (այսուհետ նաեւ՝ Ծանուցում): Ծանուցման ուսումնասիրության արդյունքում Գործակալությունը, անդրադառնալով Երեւան քաղաքում հանրային տրանսպորտում իրականացվող եւ Ծանուցմամբ նկարագրված տեսահսկման՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանության խնդիրներին եւ ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ 4-րդ եւ 5-րդ

կետերով, 2021 թվականի հուլիսի 30-ի N/24.1/23129-2021 գրությամբ Երեւանի քաղաքապետարանից պահանջել էր ուղեփակել, այն է՝ կասեցնել երթուղային ատվոբուսներում տեսահսկման իրականացումը (տեսահսկման միջոցով իրականացվող անձնական տվյալների մշակումը) մինչեւ անհրաժեշտ իրավական հիմքերի եւ կարգավորումների ապահովումը:

1.3. 2023 թվականի հուլիսի 3-ին համացանցային տարբեր հարթակներում հայտնվել է առերեւույթ Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում կահավորված տեսանկարահանող սարքով իրականացված տեսագրություն:

1.4. 2023 թվականի հուլիսի 13-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության փաստերի ստուգման fip.am հարթակում https://fip.am/23087?fbclid=IwAR3EeBJjI83TW7X4q_3gub0QkhIOwVzLdaJgjiVVXy57SILga_HKMT1foSw հղմամբ հրապարակված նյութում նշվել է խնդրո առարկա տեսագրության՝ ապօրինաբար տարածված (արտահոսած) լինելու մասին:

1.5. Վերոնշյալի համատեքստում Գործակալությունն արձանագրել է, որ մի կողմից 2021 թվականի հուլիսի 30-ի N/24.1/23129-2021 գրությամբ Երեւանի քաղաքապետարանից երթուղային ատվոբուսներում տեսահսկման իրականացումը (տեսահսկման միջոցով իրականացվող անձնական տվյալների մշակումը) մինչեւ անհրաժեշտ իրավական հիմքերի եւ կարգավորումների ապահովումը ուղեփակելու, այն է՝ կասեցնելու պահանջից հետո Գործակալությունը Երեւանի քաղաքապետարանից չի ստացել Երեւան քաղաքի հանարային տրանսպորտում տեսահսկում իրականացնելու վերաբերյալ ծանուցում կամ ծանուցման լրացում կամ որեւէ այլ ձեւաչափով տեղեկություն խնդրո առարկա տեսահսկման պատշաճ իրավական հիմքերի եւ կարգավորումների ապահովման վերաբերյալ: Մյուս կողմից, հանրային տրանսպորտում տեսահսկման իրականացման դեպքում խոսք է գնում ոչ թե կոնկրետ անձի կոնկրետ անձնական տվյալի, այլ ընդհանրապես անորոշ թվով եւ բազմաթիվ անձանց անձնական տվյալների մշակման մասին: Իր հերթին, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի փաստերի ստուգման fip.am հարթակում հրապարակված եւ սույն որոշմամբ նշված նյութը բարձրացնում է հանրային տրանսպորտում կահավորված տեսանկարահանող սարքով իրականացված տեսագրության անօրինական տարածման խնդիրը, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանից ստացված պատասխանին հղում անելով՝ նշում է տեսահսկման իրականացման նպատակների եւ «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ի աշխատակիցների՝ տեսագրությունները տեսնելու եւ ուսումնասիրելու լիազորության մասին: Ընդ որում, անձնական տվյալների մշակման (այդ թվում՝ տեսահսկմամբ) համապատասխանությունն օրենքին պարզման է ենթակա վարչական վարույթի արդյունքում:

1.6. 2023 թվականի հուլիսի 17-ին Գործակալության նախաձեռնությամբ հարուցվել է N-037/07/23 վարչական վարույթը (այսուհետ նաեւ՝ վարչական վարույթ, վարույթ)՝ Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում իրականացվող տեսահսկման

(անձնական տվյալների մշակման) համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին ստուգելու համար:

2. Վարույթի հիմքերը եւ հիմնավորումները.

Գործակալության նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կատարվում է հետևյալ հիմքի սահմաններում և ներքոհիշյալ հիմնավորումներով.

2.1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ ա) անձի դիմումը, բողոքը. բ) վարչական մարմնի նախաձեռնությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ «(…) վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը»:

2.2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը»:

2.3. Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը ՀՀ կառավարության՝ 2015թ.-ի հուլիսի 2-ի 734-Ն որոշմամբ ճանաչվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաեւ՝ Օրենք) նախատեսված լիազոր մարմին:

2.4. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝1) ստուգում է իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա անձնական տվյալների մշակման համապատասխանությունը սույն օրենքի պահանջներին»:

2.5. Նույն մասի 3-րդ կետի համաձայն՝«Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ (…) 3) պահանջում է արգելափակել, կասեցնել կամ դադարեցնել սույն օրենքի պահանջները խախտող անձնական տվյալների մշակումը», իսկ նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ «Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ (…) 4) օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում մշակողից պահանջում է անձնական տվյալների ուղղում, փոփոխում, ուղեփակում կամ ոչնչացում»:

2.6. Նույն մասի 12-րդ կետի համաձայն՝«Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ (…) 12) ապահովում է տվյալների սուբյեկտի իրավունքների պաշտպանությունը»

2.7. Սույն վարույթը կատարվում է՝ հիմնվելով ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածով սահմանված իրավունքի և այդ իրավունքն առարկայացնող «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների եւ Օրենքով սահմանված սկզբունքների վրա, մասնավորապես՝ Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված օրինականության, Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքների, Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված՝ անձնական տվյալների մշակման օրինականության վրա:

3. <u>Վարույթի համար նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն վարչական վարույթի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

3.1. Գործակալությունը 2021 թվականի հունիսի 21-ին N/24.1/17495-2021 գրությամբ Երեւանի քաղաքապետարանին հայտնել էր Երեւանի քաղաքապետարանի կողմից ձեռք բերված նոր, փոքր դասի երթուղային ավտոբուսներում տեսահսկման իրականացման (տեսահսկման միջոցով անձնական տվյալների (կենսաչափական) մշակման) վերաբերյալ ծանուցում ներկայացնելու անհրաժեշտության մասին:

3.2. Ի պատասխան՝ Երեւանի քաղաքապետարանը 2021 թվականի հունիսի 28-ի թիվ 14/77036 գրությամբ ներկայացրել էր համապատասխան ծանուցումը:

3.3. Ծանուցման ուսումնասիրության արդյունքում Գործակալությունը 2021 թվականի հուլիսի 30-ի N/24.1/23129-2021 գրությամբ Երեւանի քաղաքապետարանից պահանջել էր ուղեփակել, այն է՝ կասեցնել երթուղային ատվոբուսներում տեսահսկման իրականացումը (տեսահսկման միջոցով իրականացվող անձնական տվյալների մշակումը) մինչեւ անհրաժեշտ իրավական հիմքերի եւ կարգավորումների ապահովումը:

3.4. 2023 թվականի հուլիսի 3-ին համացանցային տարբեր հարթակներում հայտնվել է առերեւույթ Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում կահավորված տեսանկարահանող սարքով իրականացված տեսագրություն:

3.5. 2023 թվականի հուլիսի 13-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության փաստերի ստուգման fip.am հարթակում https://fip.am/23087?fbclid=IwAR3EeBJjI83TW7X4q_3gub0QkhIOwVzLdaJgjiVVXy57SILga_HKMT1foSw հղմամբ հրապարակված նյութում նշվել է խնդրո առարկա տեսագրության՝ ապօրինաբար տարածված (արտահոսած) լինելու մասին:

3.6. 2023 թվականի հուլիսի 17-ին Գործակալության նախաձեռնությամբ հարուցվել է N-037/07/23 վարչական վարույթը:

3.7. Վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հուլիսի 23-ին իրականացվել են վարչական լսումներ (այսուհետ նաեւ՝ վարչական լսումներ, լսումներ), որոնց մասնացել են Երեւանի քաղաքապետարանի եւ «Երեւանի ավտոբուս» ԲՓԸ-ի ներկայացուցիները:

3.8. Վարչական լսումների ընթացքում Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչը հստակեցրել է, որ «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ն, ինչպես նաեւ տրոլեյբոսների մասով «Երեւանի էլեկտրոտրանսպորտ» ՓԲԸ-ն տրանսպորտային օպերատորներ են, որոնք իրականացնում են տրանսպորտային երթուղիների սպասարկումը, իսկ Երեւան քաղաքում գործող ավտոբուսներում եւ տրոլեյբուսներում (միասին՝ սույն որոշման մեջ նաեւ՝ հանրային տրանսպորտ) տեսաձայնագրող սարքերը կիրառվում են Երեւանի քաղաքապետարանի լիազորությունների շրջանակում, Երեւանի քաղաքապետարանի իրավազորություններից բխող նպատակներով:

3.8. Լսումների ընթացքում Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչը նշել է, որ ըստ իրենց դիրքորոշման՝ առհասարակ տեսահսկմամբ անձնական տվյալների մշակում չի իրականացվում, քանի որ Երեւանի քաղաքապետարանը չունի տեսահսկվող ուղեւորներին նույնականացնելու հնարավորություն:

3.9. Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչը ծանոթանալով Ծանուցմանը, հայտնել է, Ծանուցմամբ նշված՝ տեսաձայնագրող սարքերի կիրառման (այսուհետ նաեւ՝ տեսահսկում) պայմանները տվյալ պահին չեն արտացոլում իրականությունը: Մասնավորապես, ավտոբուսները եւ տրոլեյբուսները կահավորված են տեսաձայնագրող սարքերով, որոնցով իրականացվող տեսահսկումը ծառայում է հետեւյալ հիմնական նպատակներին. 1) վարորդը ուղեւորների մուտքը եւ ելքը հսկելու միջոցով կազմակերպում է ուղեւորների պատշաճ եւ անվտանգ նստեցումը եւ իջեցումը, անհրաժեշտության դեպքում ուղեւորներին աջակցության տրամադրումը, անվտանգ երեւեկը, 2) իրականացվում է վարորդի վարքագծի եւ աշխատանքային պարտականությունների կատարման, ներառյալ՝ ծխելու, հեռախոսով խոսելու, արտաքին տեսքի կանոնների պահպանության նկատմամբ հսկողություն, 3) իրականացվում է ուղեվարձի գանձման նկատմամբ հսկողություն, մասնավորապես, արձանագրվում է ուղեվարձը սահմանված կարգով մետաղադրամ ընդունող սարքով վճարելու փաստը, իրականացվում է վարորդի կողմից ուղեվարձը առձեռն չվերցնելու նկատմամբ հսկողություն, 4) իրականացվում է տրանսպորտից օգտվող ուղեւորների քանակի վիճակագրություն: Երեւանի քաղաքապետարանի լսումների ընթացքում նաեւ նշել է, որ հանցագործությունների բացահայտումը կամ հասարակական կարգի պահպանությունը Երեւանի քաղաքապետարանի կողմից հանրային տրանսպորտում իրականացվող տեսահսկման ուղղակի նպատակ չեն, այլ անուղղակիորեն կարող է նման նպատակ առաջանալ այն դեպքում, երբ որեւէ իրավախախտման առիթով օրենքով սահմանված կարգով տեսաձայնագրությունները կպահանջվեն իրավապահ մարմինների կողմից:

3.10. Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչը վարչական լսումների ընթացքում նաեւ հայտնել է, որ հանրային տրանսպորտում տեղադրված սարքերով իրականացվում է տեսագրություն եւ ձայնագրություն, տեսաձայնագրությանը

(այսուհետ նաեւ՝ տեսանյութ) հեռավար եղանակով իրական ռեժիմում Քաղաքապետարանի կամ «Երեւանի ավտոբուս» ԲՓԸ-ի աշխատողները լսումների իրականացման պահին հասանելիություն չունեն, իսկ այս կամ այն տրանսպորտի տեսախցիկի ուսումնասիրությունն իրականացվում է ըստ անհրաժեշտության (բողոքի դեպքում կամ ընտրանքային):

3.11. Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչը լսումների ընթացքում հայտնել է, որ Երեւան քաղաքում հանրային տրանսպորտի բարեփոխումների շրջանակում նախատեսվում է համակարգել նաեւ հանրային տրասնպորտում իրականացվող տեսահսկումը, հստակեցնել վերոնշյալ նպատակներով տեսաձայնագրությունների օգտագործման կարգը եւ պայմանները:

3.12. Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչը լսումների ընթացքում նշել է, որ հաշվի առնելով իրենց այն դիրքորոշումը, որ տեսահսկմամբ անձնական տվյալեր Երեւանի քաղաքապետարանը չի մշակում, անհրաժեշտ չէ նաեւ իրավական հիմք. միաժամանակ, այն հանրային տրանսպորտում, որոնք կահավորված են տեսաձայնագրող սարքերով, որպես տեղեկացում՝ պարտադիր առկա է տեսահսկման մասին իրազեկող ցուցանակ, ցուցանակ չկա միայն այն տրասնպորտում, որում տեսահսկվում չի իրականացվում:

3.13. 2023 թվականի հուլիսի 13-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության փաստերի ստուգման fip.am հարթակում https://fip.am/23087?fbclid=IwAR3EeBJjI83TW7X4q_3gub0QkhIOwVzLdaJgjiVVXy57SILga_HKMT1foSw հղմամբ հրապարակված նյութում նշված տեսագրության հրապարակման փաստի կապակցությամբ Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչը նշել է, որ հանրային տրասնպորտում իրականացվող տեսաձայնագրությունների հրապարակում նախատեսող կամ արգելող կանոններ չկան, միաժամանակ, Երեւանի քաղաքապետարանը միջոցներ է ձեռնարկում տեսաձայնագրությունների անվտանգությունը անօրինական ցանկացած միջամտությունից, այդ թվում՝ անօրինական հրապարակումից ապահովելու համար:

3.14. Երեւանի քաղաքապետարանի եւ «Երեւանի ավտոբուս» ԲՓԸ-ի ներկայացուցիչները լսումների ընթացքում նշել, որ Ծանուցման ուսումնասիրության արդյունքում լրացուցիչ դիրքորոշում ներկայացնելու անհրաժեշտության դեպքում այն կներկայացնեն վարույթի մնացած ժամանակահատվածում:

3.15. Վարույթի մնացած ժամանակահատվածում Երեւանի քաղաքապետարանից կամ «Երեւանի ավտոբուս» ԲՓԸ-ից վարութով քննարկվող հարցի վերաբերյալ լրացուցիչ որեւէ դիրքորոշում չի ստացվել:

4. <u>Պատճառաբանություններ և եզրահանգումներ.</u>

Ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի.

4.1. Սույն վարչական վարույթը հարուցվել է պարզելու համար Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացվող անձնական

տվյալների մշակման (սույն որոշման մեջ նաեւ՝ տեսահսկման իրականացման) համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին ստուգելու համար:

4.2. Նախ, Գործակալությունը հարկ է համարում անդրադառնալ Երեւանի քաղաքապետարանի այն դիրքորոշումը, որ տեսահսկմամբ անձնական տվյալեր Երեւանի քաղաքապետարանը չի մշակում:

4.3. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ է «(...) ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը.»: Օրենքի նշված նորմի իմաստով մարդու տեսապատկերն անձնական տվյալ է, հետեւաբար, Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում իրականացվող այն տեսահսկումը, որն ամրագրել կամ ամագրում է մարդկանց տեսապատկերը (այն տեսանյութերը, որոնցում հայտնվել կամ հայտնվում են մարդիկ), պարունակում են անձնական տվյալներ: Մարդու տեսապատկերի՝ անձնական տյալ լինելու հանգամանքին Գործակալությունն անդրադարձել է իր նախորդ՝ N-017/09/17, N-031/12/18, N-028/05/19, N-034/10/21, N-016/06/22, N-019/06/22, N-021/08/22, N-014/05/22, N-019/06/22, N-020/07/22 եւ այլ վարչական գործերով կայացրած որոշումներով եւ հաստատել ու վերահաստատել է, որ մարդու տեսապատկերն Օրենքի իմաստով անձնական տվյալ է:

Բացի վերոնշյալը, հաշվի առնելով այն, որ վարչական լսումների ընթացքում Երեւանի քաղաքապետարանը տեսահսկմամբ անձնական տվյալների մշակում չիրականացնելը հիմնավորել է ուղեւորներին նույնականացնելու հնարավորության բացակայությամբ՝ Գործակալությունը հարկ է համարում ընդգծել, որ Օրենքը տեղեկության՝ անձնական տվյալ լինել-չլինելը չի պայմանավորում ֆիզիկական անձի կարգավիճակով, մասնագիտությամբ եւ այլն, ըստ այդմ, անձնական տվյալ է ոչ միայն ուղեւորների, այլ նաեւ վարորդի տեսապատկերը:

4.4. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ անձնական տվյալների մշակում է «(...) անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ.»:

Սույն որոշման 4.3 կետում Գործակալությունն արդեն արձանագրել է, որ ֆիզիկական անձի տեսապատկերն անձնական տվյալ է, հետևաբար, ֆիզիկական անձին տեսաձայնագրելը, տեսահսկելը, ներառյալ, երբ ֆիզիկական անձը

հայտնվում է տեսաձայնագրող սարքի տեսադաշտում, անձնական տվյալի մշակում է (սուն որոշման մեջ տեսահսկման իրականացման մասին նշելիս նկատի է ունեցվում սույն կետում նշված անձնական տվյալների մշակումը):

Անձնական տվյալների եւ դրանց մշակման մասին են վկայում նաեւ տեսահսկման ուղղակի նպատակներից առնվազն նրանք, որ տեսահսկումն իրականացվում է վարորդի վարքագծի եւ աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ հսկողության, ուղեվարձի գանձման, մասնավորապես՝ ուղեվարձը սահմանված կարգով մետաղադրամ ընդունող սարքով վճարելու փաստի արձանագրման, վարորդի կողմից ուղեվարձը առձեռն չվերցնելու նկատմամբ հսկողութան նպատակներով, ինչպես նաեւ տեսահսկման անուղղակի նպատակը, այն է՝ տեսաձայնագրությունները կարող են տրամադրվել հանցագործությունների բացահայտումը կամ հասարակական կարգի պահպանության իրականացման նպատակով իրավախախտման առիթով օրենքով սահմանված կարգով իրավապահ մարմինների կողմից պահանջվելու դեպքում:

4.5. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ անձնական տվյալներ մշակող է «(...) պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային հիմնարկ կամ կազմակերպություն, իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը կազմակերպում և (կամ) իրականացնում է անձնական տվյալների մշակում.»:

Վարչական լսումների ընթացքում Երեւանի քաղաքապետարանի ներկայցուցիչը հստակեցրել էր, որ «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ն, ինչպես նաեւ տրոլեյբոսների մասով «Երեւանի էլեկտրոտրանսպորտ» ՓԲԸ-ն տրանսպորտային օպերատորներ են, որոնք իրականացնում են տրանսպորտային երթուղիների սպասարկումը, իսկ Երեւան քաղաքում գործող ավտոբուսներում եւ տրոլեյբուսներում (միասին՝ սույն որոշման մեջ նաեւ՝ հանրային տրանսպորտ) տեսաձայնագրող սարքերը կիրառվում են Երեւանի քաղաքապետարանի լիազորությունների շրջանակում, Երեւանի քաղաքապետարանի իրավազորություններից բխող նպատակներով:

Ուստի, խնդրո առարկա դեպքում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով անձնական տվյալներ մշակողը Երեւանի քաղաքապետարանն է:

4.6. Սույն որոշման 4.2-4.5 կետերում նշվածը հաշվի առնելով՝ Գործակալությունն արձանագրում է, որ Երեւանի քաղաքապետարանը Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացնում է անձնական տվյալների մշակում: Ուստի, վարույթով որոշում կայացնելու համար անհրաժեշտ է պատասխանել հետեւյալ հարցին՝ արդյո՞ք օրինական է Երեւանի քաղաքապետարանի կողմից Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում

տեսահսկմամբ իրականացվող անձնական տվյալների մշակումը (ֆիզիկական անձանց տեսահսկման իրականացումը):

4.7. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «1. Անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե՝ 1) տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ սույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, 2) մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից»: Նույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «5. Առանց տվյալների սուբյեկտի համաձայնության անձնական տվյալներ կարող են մշակվել, եթե տվյալներ մշակելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով»:

Վերոնշյալից բխում է, որ անձնական տվյալների մշակումը կհամարվի օրինական, եթե մշակումն իրականացվի կամ անձնական տվյալի սուբյեկտի ***համաձայնությամբ***, կամ համաձայնության բացակայության դեպքում մշակումն ***ուղղակիորեն նախատեսված լինի օրենքով***, կամ տվյալները ձեռք բերվեն անձնական տվյալների ***հանրամատչելի աղբյուրներից***: Ընդ որում, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անձնական տվյալի մշակման հիմքերից որեւէ մեկն ընտրելու հայեցողությունը պետք է մեկնաբանել հնարավորինս նեղ. այն պարագայում, երբ անհրաժեշտ է, որ պետական մարմինն օգտվի անձնական տվյալի մշակման համաձայնության կամ հանրամատչելի աղբյուրից ձեռք բերված լինելու հիմքերից, անհրաժեշտ է, որ այդ հնարավորությունը (հայեցողությունը) նույնպես արտացոլված լինի օրենքով: Նման դիրքորոշում Գործակալությունը հայտնել է թիվ N-017/09/17 վարչական գործով կայացված որոշմամբ եւ հետագայում վերահաստատել է իր այդ դիրքորոշումը այլ վարչական գործերով կայացրած որոշումներով՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:»:

4.8. Երեւանի քաղաքապետարանը վարույթի ընթացքում չի ներկայացրել Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ անձնական տվյալների մշակման (տեսահսկման իրականացման) որեւէ իրավական հիմք, իսկ լսումների ընթացքում նշել է, որ հաշվի առնելով իրենց այն դիրքորոշումը, որ տեսահսկմամբ անձնական տվյալեր Երեւանի քաղաքապետարանը չի մշակում, անհրաժեշտ չէ նաեւ իրավական հիմ՝ միաժամանակ հայտնելով, որ այն հանրային տրանսպորտում, որոնք կահավորված են տեսաձայնագրող սարքերով, պարտադիր առկա է տեսահսկման մասին իրազեկող ցուցանակ՝ որպես տեղեկացում:

4.9. Նման պայմաններում, երբ վարույթի ընթացքում չի բացահայտվել որեւէ օրենք, որով ուղղակիորեն կսահմանվեր Երեւանի քաղաքապետարանի կողմից

Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացվող անձնական տվյալների մշակումը (տեսահսկման իրականացումը)՝ Գործակալությունն արձանագրում է, որ առկա չէ Երեւանի քաղաքապետարանի կողմից Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացվող անձնական տվյալների մշակման (տեսահսկման իրականացման) պատշաճ իրավական հիմք:

4.10. Անձնական տվյալների մշակման իրավաչափությունը (Օրենքին համապատասխանությունը) ենթադրում է անձնական տվյալների մշակման բոլոր սկզբունքների եւ կանոնների միաժամանակյա ապահովում: Այսպես, անձնական տվյալների մշակումն իրավաչափ (Օրենքին համապատասխան) կարող է համարվել, եթե միաժամանակ պահպանված են եւ անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքը, եւ համաչափության սկզբունքը, եւ **առկա է տվյալների մշակման պատշաճ իրավական հիմք:** Նման դիրքորոշում Գործակալությունը հայտնել է թիվ N-031/09/21 վարչական վարույթով կայացված որոշմամբ:

4.11. Սույն որոշման 4.7-4.10 կետերում նշվածը հաշվի առնելով՝ Գործակալությունը գտնում է, որ **Երեւանի քաղաքապետարանի կողմից Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացվող անձնական տվյալների մշակումը (տեսահսկման իրականացումը) հակասում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված՝ անձնական տվյալների մշակման օրինականությանը, ըստ այդմ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:**

4.12. Գործակալության որոշումների պատճառաբանությունները եւ եզրահանգումներն ըստ էության ունեն նաեւ խորհրդատվական ներուժ եւ կարող ն որպես այդպիսին (որպես խորհդատվություն) կիրառվել միատեսակ հանգամանքներում անձնական տվյալների մշակման իրավաչափության վերաբերյալ կարծիք ձեւավորելիս կամ տվյալների մշակում ենթադրող որոշումներ կայացնելիս: Նշվածի համատեքստում հաշվի առնելով վարչական լսումների ընթացքում երեւանի քաղաքապետարանի ներկայացրած այն տեղեկությունը, որ Երեւան քաղաքում հանրային տրանսպորտի բարեփոխումների շրջանակում նախատեսվում է համակարգել նաեւ հանրային տրասնպորտում իրականացվող տեսահսկումը, հստակեցնել վերոնշյալ նպատակներով տեսաձայնագրությունների օգտագործման կարգը եւ պայմանները, ինչպես նաեւ «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության փաստերի ստուգման fip.am հարթակում https://fip.am/23087?fbclid=IwAR3EeBJjI83TW7X4q_3gub0QkhIOwVzLdaJgjiVVXy57SILga_HKMT1foSw հղմամբ հրապարակված նյութում նշված տեսագրության հրապարակման փաստի կապակցությամբ ներկայացրած այն տեղեկությունը, որ հանրային տրասնպորտում իրականացվող տեսաձայնագրությունների հրապարակում նախատեսող կամ արգելող կանոններ չկան, միաժամանակ, Երեւանի քաղաքապետարանը միջոցներ է ձեռնարկում տեսաձայնագրությունների

անվտանգությունը անօրինական ցանկացած միջամտությունից, այդ թվում՝ անօրինական հրապարակումից ապահովելու համար՝ Գործակալությունը հարկ է համարում անդրադառնալ խնդրո առարկա դեպքում տեսահսկմամբ անձնական տվյալների մշակման օրինականության եւ համաչափության սկզբունքներին, անձնական տվյալների անվտանգության ապահովմանը:

4.12.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձնական տվյալներ մշակողը պարտավոր է հետևել և ապահովել, որ տվյալները մշակվեն օրենքի պահանջների պահպանմամբ: 2. Անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:»: Թեեւ վարչական լսումների ընթացքում Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչը նշել է այն որոշակի նպատակները, որոնց ծառայում է Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկման իրականացումը, սակայն Երեւանի քաղաքապետարանի կողմից Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացվող անձնական տվյալների մշակման (տեսահսկման իրականացման) պատշաճ իրավական հիմքի բացակայության պայմաններում խնդրո առարկա տեսահսկման իրականացման նպատակները պատշաճ իրավական հիմքով ամրագրված չեն որպես նույն տեսահսկմամբ անձնական տվյալների մշակման նպատակներ: Ավելին, Գործակալությունն ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ Երեւանի քաղաքապետարանի՝ 2021 թվականի հունիսի 28-ի թիվ 14/77036 գրությամբ ներկայացված Ծանուցմամբ նշված էր այլ՝ վարչական լսումների ընթացքում Երեւանի քաղաքապետարանի ներկայացրած՝ խնդրո առարկա տեսահսկման իրականացման նպատակներից տարբերվող նպատակ, իսկ Երեւանքի քաղաքապետարանը վարչական լսումների ընթացքում հայտնեց, որ Ծանուցմամբ նշված՝ տեսահսկման իրականացման պայմանները տվյալ պահին չեն արտացոլում իրականությունը: Արդյուքնում,անձնական տվյալների մշակման պատշաճ իրավական հիմք ապահովելիս, տվյալների մշակումն օրենքով նախատեսելիս անհրաժեշտ կլինի նաեւ ամրագրել անձնական տվյալների մշակման որոշակի նպատակները, (որպես օրինակ տես՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցների վերաբերյալ դրույթները, մասնավորապես՝ տեսանյութերի եւ լուսանկարների օգտագործման նպատակների արձանագրումը կամ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասը): **Անձնական տվյալների մշակումն առանց պատշաճ իրավական ակտով անձնական տվյալների մշակման որոշակի նպատակներ սահմանելու խնդրահարույց կլինի անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքի տեսանկյունից:**

Բացի այդ, անձնական տվյալների մշակումն օրենքով նախատեսված լինելը դեռ բավարար չէ անձնական տվյալների մշակումն օրինական համարելու համար, անհրաժեշտ է նաեւ, որ անձնական տվյալները մշակվեն օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ: Նման դիրքորոշում Գործակալությունը հայտնել է N-

009/05/17 վարչական վարույթով կայացրած որոշմամբ՝ վերահաստատելով այն իր հետագա որոշումներով: Այնինչ, խնդրո առարկա դեպքում Երեւանի քաղաքապետարանի կողմից Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացվող անձնական տվյալների մշակման (տեսահսկման իրականացման) պայմանները եւ կարգը նույնպես վերաբերելի իրավական ակտով սահմանված չեն: Այսպես, վարչական լսումների ընթացքում Երեւանի քաղաքապետարանը հայտնել էր հանրային տրանսպորտի բարեփոխումների շրջանակում հանրային տրասնպորտում իրականացվող տեսահսկումը համակարգելու, տեսանյութերի օգտագործման կարգը եւ պայմանները հստակեցնելու մտադրության մասին: **Անձնական տվյալների մշակումն առանց պատշաճ իրավական ակտով անձնական տվյալների մշակման պայմաններ սահմանելու խնդրահարույց կլինի անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքի տեսանկյունից:**

4.12.2.«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: 2. Անձնական տվյալներ մշակողը պարտավոր է անձնական տվյալները մշակել այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է օրինական նպատակներին հասնելու համար: 3. Արգելվում է այնպիսի անձնական տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն տվյալները մշակելու նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ: 4. Արգելվում է անձնական տվյալների մշակումը, եթե տվյալները մշակելու նպատակին հնարավոր է հասնել ապանձնավորված կերպով: 5. Անձնական տվյալները պետք է պահպանվեն այնպես, որ բացառվի տվյալների սուբյեկտի հետ դրանց նույնականացումն ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է դրանց նախօրոք որոշված նպատակներին հասնելու համար:»: Որեւէ օրենքով անձնական տվյալների մշակում նախատեսելը բավարար չէ անձնական տվյալների պաշտպանության իրավունքն ապահովելու համար: Անհրաժեշտ է նախատեսել նաեւ երաշխիքներ, որոնք կապահովեն համաչափության սկզբունքը (անձնական տվյալների մշակումը պիտանի, անհրաժեշտ և չափավոր է, դրանք պահվում են այնպես, որ բացառվի տվյալների սուբյեկտի հետ դրանց նույնականացումն ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է դրանց նախօրոք որոշված նպատակներին հասնելու համար եւ այլն), ինչպես նաեւ կապահովեն անձնական տվյալների սուբյեկտի իրավունքների իրականացումը: Նման դիրքորոշում Գործակալությունը հայտնել է N-001/03/16 վարչական վարույթով կայացրած որոշմամբ՝ վերահսատատելով այն իր հետագա որոշումներով: Արդյուքնում, անձնական տվյալների մշակման պատշաճ իրավական հիմք ապահովելիս, տվյալների մշակումն օրենքով նախատեսելիս անհրաժեշտ կլինի նաեւ սահմանել անձնական տվյալների մշակման համաչափությունն ապահովող կանոններ (կրկին որպես օրինակ տես՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցների վերաբերյալ դրույթները կամ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 72-րդ հոդվածը): **Անձնական**

տվյալների մշակումն առանց պատշաճ իրավական ակտով անձնական տվյալների մշակման համաչափությունն ապահովող կանոնների սահմանելու խնդրահարույց կլինի անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքի տեսանկյունից:

4.12.3. Անձնական տվյալների պաշտպանության բաղադրատարր է նաեւ անձնական տվյալների անվտանգության ապահովումը: Մասնավորապես, Օրենքն անձնական տվյալներ մշակողի վրա պարտականություն է դնում ապահովելու մշակվող անձնական տվյալների անվտանգությունը՝ 19-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանելով, որ«2. Անձնական տվյալները մշակելու ընթացքում մշակողը պարտավոր է օգտագործել գաղտնագրման միջոցներ՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական համակարգերի պաշտպանվածությունը պատահական կորստից, տեղեկատվական համակարգեր անօրինական մուտք գործելուց, անձնական տվյալների անօրինական օգտագործումից, ձայնագրումից, ոչնչացումից, վերափոխումից, ուղեփակումից, կրկնօրինակումից, տարածումից և այլ միջամտությունից ապահովելու համար: 3. Մշակողը պարտավոր է կանխել անձնական տվյալների մշակման համապատասխան տեխնոլոգիաների մատչելիությունը դրա իրավունքը չունեցող անձանց համար և ապահովել, որ այդ համակարգերի օրինական օգտագործողի համար հասանելի լինեն միայն իր կողմից մշակման ենթակա տվյալները և այն տվյալները, որոնցից թույլատրված է օգտվել:»: Այնինչ, Գործակալությունն ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ վարույթով քննարկվող դեպքում մի կողմից խոսք է գնում Երեւան քաղաքի հանրային տրասնպորտում իրականացված տեսաձայնագրության (տեսանյութի) հրապարակման մասին, մյուս կողմից Երեւան քաղաքի հանրային տրասնպորտում իրականացվող տեսաձայնագրությունների (տեսնյութերի) հրապարակում նախատեսող կամ արգելող կանոններ չկան, եւ այդ մասին վարչական լսումների ընթացքում նշել է Երեւանի քաղաքապետարանը: Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ անձնական տվյալների ցանկացած մշակում, այդ թվում անձնական տվյալների հրապարակումը, պետք է ունենա պատշաճ իրավական հիմք: Նման պայմաններում, երբ առկա չէ խնդրո առարկա տեսանյութերի հրապարակման իրավական հիմք, սակայն փաստացի տեղի է ունեցել Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում իրականացված տեսաձայնագրության (տեսանյութի) հրապարակում՝ խնդրո առարկա անձնական տվյալների մշակումը խնդրահարույց է ոչ միայն անձնական տվյալների մշակման օրինականության, այլ նաեւ անվտանգության ապահովման կանոնների տեսանկյունից: Սա նշելիս Գործակալությունը հաշվի է առնում նաեւ այն հանգամանքը, որ Երեւանի քաղաքապետարանի՝ 2021 թվականի հունիսի 28-ի թիվ 14/77036 գրությամբ ներկայացրած Ծանուցման ուսումնասիրության արդյունքում Գործակալությունը, ղեկավարվելով «Անձնական տվյալների

պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի դույթներով, 2021 թվականի հուլիսի 30-ի N/24.1/23129-2021 գրությամբ Երեւանի քաղաքապետարանից պահանջել էր ուղեփակել, այն է՝ կասեցնել երթուղային ատվոբուսներում տեսահսկման իրականացումը (տեսահսկման միջոցով իրականացվող անձնական տվյալների մշակումը) մինչեւ անհրաժեշտ իրավական հիմքերի եւ կարգավորումների ապահովումը: Այլ կերպ ասած, վարույթով քննարկվող դեպքում ինչպես տեսահսկմամբ անձնական տվյյալների մշակումը (տեսահսկման իրականացումը), այնպես էլ խնդրո առարկա տեսանյութի հրապարակումը տեղի է ունեցել անձնական տվյալների նման մշակումը կասեցված լինելու պայմաններում: Արդյուքնում, անձնական տվյալների մշակման պատշաճ իրավական հիմք ապահովելիս, տվյալների մշակումն օրենքով նախատեսելիս անհրաժեշտ կլինի նաեւ սահմանել անձնական տվյալների մշակման անվտանգությունն ապահովող կանոններ (կրկին որպես օրինակ տես՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցների վերաբերյալ դրույթները կամ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 72-րդ հոդվածը): **Անձնական տվյալների մշակումն առանց անձնական տվյալների անվտանգության ապահովման պատշաճ միջոցներ սահմանելու խնդրահարույց կլինի անձնական տվյալներ մշակելու անվտանգության ապահովման միջոցների եւ մշակողի պարտականությունների տեսանկյունից:**

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1849-Ն որոշման դրույթները և ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Երեւանի քաղաքապետարանի կողմից Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացվող անձնական տվյալների մշակումը (տեսահսկման իրականացումը) չի համապատասխանում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
2. Արգելել Երեւանի քաղաքապետարանի կողմից Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացվող անձնական տվյալների մշակումը (տեսահսկման իրականացումը):
3. Երեւանի քաղաքապետարանի՝ դադարեցնել Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացվող անձնական տվյալների մշակումը (տեսահսկման իրականացումը)՝ մինչեւ Երեւան քաղաքի հանրային տրանսպորտում տեսահսկմամբ իրականացվող անձնական տվյալների մշակման համապատասխանեցումն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին այն հանձնելու հաջորդող օրվանից և օրենքով սահմանված կարգով և ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
ՋՈՒԼԻԵՏԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ